Դիտորդի վարքագծի կանոններ

Ես՝ ——ս, ներգրավվելով «Լուսաստղ» Բարեգործական Հասարակական Կազմակերպության դիտորդական առաքելության մեջ պարտավորվում եմ.

- Ինձ հայտնի դառնալուն պես Դիտորդական առաքելությանը տեղեկացնել թեկնածուների կամ ընտրական գործընթացի այլ մասնակիցների հետ բարեկամական, ընկերական կամ գործնական կապերի մասին, որոնք կարող են ազդել դիտորդի անկախության վրա կամ մեկնաբանվել որպես այդպիսին։

Հանդիսանալով «Լուսաաստղ» բարեգործական հասարակական կազմակերպության դիտորդ պարտավորվում եմ.

- Ներկայանալ ընտրական հանձնաժողովների նախագահներին, գրանցվել և տեսանելիորեն կրել դիտորդի վկայականը

- Հարգել ՀՀ գործող օրենսդրությունը

- Լինել անկուսակցական

– Չլինել կողմնակալ և դիտորդություն իրականացնելիս չառաջնորդվել քաղաքական հայացքներով

- Հագուստի կամ ունեցած պարագաների վրա որևէ քաղաքական ուժի խորհրդանիշ չկրել

- Լինել հարգալից ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների հանդեպ

- Չհայտնել անձնական տվյալներ, չկատարել հրապարակումներ սոցիալական մեդիա հարթակում

- Դիտարկման ընթացքում վիճաբանության մեջ չմտնել և ցուցումներ չտալ ընտրական գործընթացի որևէ մասնակցի

- Չխանգարել նախընտրական գործընթացներին և չխոչընդոտել ընտրական որևէ փուլի աշխատանքներին։

- Ընտրական հանձնաժողովի անդամներից, վստահված անձանցից և ընտրողներից չընդունել որևէ բան, ինչը կարող է ազդել դիտարկողի անկախության և ազատության վրա կամ մեկնաբանվել որպես այդպիսին

- Առանց համակարգողին տեղեկացնելու չլքել դիտարկման հանձնարարված տարածքը

- Դիտարկումն իրականացնել թափանցիկ կերպով

- Արձանագրված խախտումների վերաբերյալ ստացված տվյալները չփոխանցել երրորդ անձանց

- Հարցազրույցներ չտալ

- Չօգնել որևէ ընտրողի, բացառությամբ կյանքի կամ առողջության համար անհետաձգելի օգնություն ցուցաբերելու հնարավոր դեպքից

- Համագործակցել համակարգողի և շրջիկ դիտորդների հետ

- Ոստիկանության ծառայողներին դիմել միայն տեղամասային կենտրոնից դուրս եղած խախտումների առնչությամբ կամ եթե կա դիտորդի անձին կամ գույքին իրական սպառնալիք

- Աջակցության կամ խորհրդատվության համար դիմել միայն Դիտորդական առաքելության համակարգողին

- Հասկանալ, որ այս վարքագծի կանոնի որևէ գիտակցված խախտում վարկաբեկում է ոչ միայն դիտորդին, այլև ընտրությունների դիտարկման առաքելությունն ամբողջությամբ:

Դիտորդ՝ _____ _____

ստորագրություն Անուն, ազգանուն

Վարքագծի կանոնների չպահպանման դեպքում դիտորդը կարող է զրկվել դիտորդական վկայականից, վկայականը կմարվի և դիտորդը կհեռացվի «Լուսաստղ» ՀԿ-ի դիտորդական առաքելությունից: